

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.



ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
Իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ОТЪ КОНТОРЫ ГАЗЕТЫ

„НОВОЕ ОБОЗРѢНІЕ“

Издание газеты „НОВОЕ ОБОЗРѢНІЕ“ будетъ возобновлено

Съ 18-го августа настоящаго года.

Подписчики прошлаго года, нежелавшіе взять обратно оставшіяся за конторой деньги, будутъ получать газету безъ доплаты съ 18-го августа по 1-е октября. Тѣ изъ нихъ, которые пожелаютъ получать газету и затѣмъ, съ 1-го октября по 1-е января 1901 г., доплачиваютъ 2 руб. 50 коп. Новыя же подписчики за время съ 18-го августа по 1-е января 1901 года платятъ 3 руб. 50 коп.

Подписчики прошлаго года, въ случаѣ перемѣны адреса за время до 18-го августа, сообщаютъ о томъ заблаговременно въ контору «Нов. Об.», причѣмъ особой доплаты за перемѣну адреса не вносятъ.

Для приѣма подписки и объявленій

контора (Барятинская, д. кн. Гумановыхъ) открыта по вторникамъ и пятницамъ, отъ 6 до 7 час. вечера. 1—3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ոչ արգելքների միջոցով.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Մի խոշոր ժողովրդական հարց. Նամակ Երեսանից. Նամակ Շուշուց. Նամակ Խմբագրության. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Ֆրանսիայից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՈՉ ԱՐԳԵԼՔՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

Այն ժամանակ, երբ Բազուի նաւթարդիւնները մեծ տօնախմբութեան և հրճուանքի մէջ են նաւթի գների շահաւորութեան լիարժեք պատճառով, բոլորովին ուրիշ զգացմունքներով են խօսում միջոցաւոր նաւթ սպառողները, որոնք մինչև այժմ ունէին լուսաւորութեան և վառելիքի էականութիւն նիւթ իրանց ձեռքին: Սպառողների զանգամները հասան և վարչական բարձր շրջանների սկանչին և գրաւեցին իրանց վրա յատուկ ուշադրութիւն:

Սակայն ի՞նչ միջոցներ կարող էր գործադրել կառավարութիւնը նաւթի գները բեռնաւնջելու համար: Արհեստական բեռնի զանազան միջոցները կարող էին մեծ վնասներ հասցնել արդիւնաբերութեան զարգացման, մի և նոյն ժամանակ առանց էական բաւարարութեան տալու հիմնական այն պահանջին, որ նաւթի քանակութիւնը չը պակասի, այլ օրինք օր աւելանայ և կարողանայ լրացնել բոլոր կարիքները: Ներկայացրած խնդրանքները մինչև այժմ չեն լուծուել, որովհետև վարչական շահագործութիւնը որքան կարելի է մեծ չափով ընդարձակվի: Երբ որ վաճառանոցներում կը շատանայ նաւթի քանակութիւնը, այն ժամանակ նրա գները կիջնի և նա մատչելի կը դառնայ թէ ազգաբնակչութեան լայնածաւալ խաւերի համար և թէ ձեռնուու կը դառնայ գործարանների համար, որոնք որոնում են էականագին վառելիք:

Միջոցաւորութեան որոշումը այդպիսով նպատակ ունի օգնել սպառողների արգար պահանջին արդիւնաբերութեան զարգացման միջոցով, նպաստելով նաւթային գործի աւելի ևս մեծ ընդարձակութեան: Միջոցաւորութիւնը որոշել է յատկացնել առանձին գումար նոր նաւթաշողեր գտնելու համար և զիւրութիւններ ընծայել նաւթարդիւնաբերողներին թէ հողերը կապալով վերցնելու և թէ նրանց շահագործելու ժամանակ:

Նաո ցանկալի է, որ նաւթ սպառող-

ների զանգամներին բաւարարութիւն տալու համար ծրագրված գիտաւորութիւնները շուտով իրագործվեն, օգուտ բերելով թէ այդ սպառողներին և թէ արդիւնաբերութեան զարգացման:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Ներկայ քաղաքական խառնակ դրութեան մէջ, երբ արիւնի հոսք լարել է քաղաքակիրթ ազգերի ամբողջ ուշադրութիւնը եւ առաջացնում է այն ահաւելի հարցը, թէ արդեօք չի լինի պատերազմ պետութիւնների մէջ,—մի այսպիսի դրութեան մէջ զարմանալի չէն այն խաղաղ տօնախմբութիւնները, որոնք կատարվում են Գուտենբերգի ծննդեան հարիւրամեակի առիթով: Զարմանալի ճակատագիր: Պարբերական ժամուրը մի կողմից խօսում է չինական եւ տրանսպալական արեւմտեան զէպքերի մասին, յուզելի խորհրդածութիւններ մէջ,—մի կողմից, որոնք եթէ իրականանան, մարդկային արիւնը աւելի մեծ գետեր պիտի կազմէ,—իսկ միւս կողմից առաջադէմ մտքի, ազատութեան, եղբայրութեան այն հրաշալի գործիքն են մեծաբուն, որ կոչվում է տպագրութիւն: Ուրեքի մինչև գլուխ գինված Գերմանիան, նա, որ այժմ էլ եւրոպական ազգերը ծովային միջոցաւորութիւնների մէջ է գտնուում, Գուտենբերգի հայրենիքն է եւ, ի հարկէ, ամենեւեպ փառաւոր կերպով է տօնում իր այդ մեծ օրը: Ստրասբուրգի համալսարանի պրոֆէսոր Յիլլեր «Frankfurter Zeitung» լրագրում արգված մի յօդուածի մէջ ընդոռնում է այն դերը, որ կատարեց եւ կատարում է Գուտենբերգի հարցը մարդկային կուլտուրայի պատմութեան մէջ: Ամեն մէկին յայտնի է, որ տպագրութեան յեղափոխիչ ահագին ոյժի ամբողջ զարգանքը նրա մէջ է, որ տպարանը էականորէն դիւրեւ, մատչելի դարձրեց ամենքին, ուսմանը պիտի տրութիւնը: Պրոֆէսոր Յիլլեր ամենեւեպ չեղարկում է այդ հանգամանքը: Դրքի դիւրաւարժութիւնը, տպագրական խօսքի ազդեցութիւնը ահագին բազմութիւնների վրա, որոնք մինչև այդ խաւարի ու տղիւտութեան մէջ էին, նուաճեցին ամբողջ աշխարհը եւ նոյն իսկ Նապոլեոն Մեծը, որ ատում էր ամեն մի իդէալական բան, հարկադրված եղաւ խոտովանելու, որ մամուլը հինգերորդ մեծ պետութիւնն է:

Մեքենաների մեր դարում անդի ունեցաւ մի նոր տեխնիքական գիւտ—արագատիպ մեքենաների գիւտը: Դրա հորինելու կարելի դարձաւ տպագրական խօսքի լայն տարածումը: Զանապարհներ բացվեցին լրագրիւնը տարածելու համար, իսկ փոխադրական նոր միջոցները—չոգին եւ ելեկտրականութիւնը—յարմարութիւն տուին տպագրութեան արդիւնները արագ տեղափոխելու եւ մտքերը թռան ամբողջ աշխարհի վրայով ու սկսեցին խմբագրատանից եւ գիտնականի խաղաղ առանձնատենակից մտնել ամենահեռաւոր երկրները, ամեն մի համառ իւրը-

ձիթի մէջ: Գուտենբերգի գիւտը նուաճեց աշխարհը:

Բայց միթէ տպագրութիւնը միայն օգուտ բերեց մարդկութեան: Ամենքին յայտնի է, որ նա լայնի հետ խաւար էլ տարածեց: Մի կողմ թողնելով այն արգելքները, որոնք յարուցվում էին ազատ մտքի դէմ զանազան միջոցներով, մենք կարող ենք յիշել այստեղ վաճառվող, ինքուրտ մամուլը, չարչիւններ, անգրագէտ խմբագիրների մամուլը, որ այնքան չարիքներ է պատճառել մարդկութեան եւ օրինք, դժբաղդար, գրկված չենք եւ մենք՝ հայերս: Որքան ապակաւորութիւն, որքան թոյն ու զուլեւի չեն եւ ուտեցնում ընթերցող հասարակութեան տպագրական գործի այդ անարժան, լիւր սպասուորները: Սակայն պէտք է յուսաւորուինք, պէտք է ասել թէ տպագրութիւնը մարդկութեան ամենաանկեղծ բարեկամը չէ: Ո՛չ, հազար անգամ ոչ: Ինչպէս տպագրութիւնը դարձրին ընթերցում յաղթել է այն բազմաթիւ արգելքները, որոնք սահմանվում էին նրան խեղդելու եւ ոչնչացնելու համար, այնպէս էլ նա կոչնչացնէ չարագործ, թունաւոր մամուլի գործունէութիւնը:

Վերջ ի վերջոյ—ասում է Յիլլեր—մնացել է միայն մի միջոց մամուլի չարագործ մասի դէմ—ազատ մտքութիւն ոգու, որին չէ կապում ոչ մի շղթայ: Ազատութեան մէջ մենք պիտի գործադրենք այն զէնքը, որ կռիւ է Գուտենբերգ, որպէս զի հասցնեք Հայարտութիւնն ու առաջադիմութիւնը կատարեալ յաղթանակի: Ինչպէս եւ ամեն մի մեծ երեւոյթ, տպագրութիւնը եկաւ մեզ մօտ ոչ թէ խաղաղութիւն, այլ սուր բերելու: Մենք երբեք Գուտենբերգին, մենք տեսնում ենք եւ հասարակական կարծիքի ոյժը, մենք տեսնում ենք մեր ժամանակի ուսմական ոգին: Բայց տօնոյնը միշտ իրանց առաջ պարտաւորութիւններ էլ ունենէ Զատարական կարծիքի հիմքում գրված են ատութիւնն ու ճշմարտութիւնը, գրաչարի սուղեւ գրված արկղիկներից տարածվում են եւ լոյս եւ խաւար, եւ բարիք եւ չարիք: Ուսում մենք պիտի միացնենք զէնքը՝ կեղծաւորութեան եւ ստութեան, չարամտութեան եւ խաւարապաշտութեան դէմ կռուելու համար: Մենք չը գիտենք թէ տպագրութեան ստեղծողը ինչ նպատակով է նրան ստեղծել, բայց գիտենք, որ մենք պարտաւոր ենք գործադրել նրան արդիւնային կուլտուրայի համար, կրթութիւն տարածելու համար եւ ամենից առաջ այն հակադրութիւնները ոչնչացնելու համար, որոնք այժմ բաժան բաժան են անուում մեզ: Ամենայնոր վիճը—այն վիճէ, որ կայ կրթութեան եւ տղիտութեան մէջ: Տպագրական խօսքը կօշնէ մեզ կամուրջ գցելու այդ վիճի վրայով:

Այսպէս պիտի հասկանաւոր մի ամենասուրբ պարտականութիւնը իւրաքանչիւր մարդ, որ ծառայում է տպագրական խօսքին: Այս դաւանութիւնից դուրս չը կայ փրկութիւն ոչ մի ազգի համար:

Գերմանացի գիտնականի այս ոսկէ մտքերը կարգալիս մենք ստացանք «Բազմամէլ» յուլիսի համարը (փակագծի մէջ ասենք, որ դրա հետ ստացանք եւ «Հանդէս Ամսօրնայի» ապրիլի համարը միայն—«Արպիս» յետամնացութիւն վիճենայ Միջերկրական վանքի համար): Ս. Ղազարի միաբանութեան մի յայտարարութիւնը, որ տպագրված է «Բազմամէլ» կազմի վրա, մեզ հանեց իլլիդիաների աշխարհից եւ առաջնորդեց զէպի հայկական իրականութիւնը, որ այնքան տարբեր է երջանիկ ազգերի իրականութիւնից: Այդ յայտարարութիւնից իմանում ենք, որ վերնախնի տպարանը տպագրում է Հ. Ալիշանի «Հայապատմութեան» աշխատութիւնը: «Գործն է հաւաքումն պատմաց հայոց» ժամանակագրական կարգաւ, սկիզբէն մինչև ժիւղար Հաւաքիչն աշխարհաբար լիզուաւ կը լսուելու բացատրութիւններ եւ ծանօթութիւններ իւրաքանչիւր իջին ներքեւ: Մի շատ գեղեցիկ ձեռնարկութիւն, որի արժէքը կարող է հասկանալ նա, ով երբ եւ ինչ փորձել է հաւաքել մեր հին պատմագրութիւնները, որոնք տպագրված են զանազան ժամանակ եւ զանազան տեղեր: Ունենալ այդ բոլորը մի գրքում ամփոփված — Միջերկրական միաբանութիւնը

դրանից աւել ինչ գեղեցիկ գործով կարող էր տօնել առաջիկայ տարին Միջերկր Սերաստացու յօրեկները: Բայց ահա յայտարարվում է գրքի գինը եւ դուք մնում էք ապշած: Բաժանորդները 30 ֆրանկ կանխիկ—այսինքն մօտ 15 ռուբլի (ֆրանկը 50 կոպէկ են հաշուում Թիֆլիսում Միջերկրանների գրքերը վաճառողները): Իսկ տպագրութիւնը վերջապէս յետոյ գինը կը լինի 50 ֆրանկ—մօտ 25 ռուբլի! Գանի մարդ կարողութիւն կունենայ այդքան փող տալ Միջերկրան հայրենին: Ամեն ժամանակ, երբ մտնում էք գրաւաճառանոց՝ Միջերկրանների մի օր եւ է հրատարակութիւնը (վենետիկի թէ վիէնայի) գնելու համար, դուք սոսկում էք, երբ մի փոքրիկ գրքոյի համար ձեզանից պահանջում են 1—2 ռուբլի: Եւ այդպէս էր միշտ, ամենաանց անշափ էր Միջերկրանների մեղ վրա դրած հարկը այն ժամանակ, երբ նրանք էին հայկական գրքեր ժառանգարարութիւնը: Գանցաւ, բոլոր չեն ուզում լսել նրանք, թէ եւ խօսում են ժողովրդի օգտի մասին, թէ եւ դիտեն, որ էժան գրքը կարող է լաւ տարածվել եւ շահ էլ տալ Միջերկրանները միայն հարուստ բուրժուաների գրադարանների հոգան են տեսնում. այդ պատճառով է, որ Հ. Ալիշանի «Միջերկր» արժէ 30 ռուբլի, «Այրարատը» 30—35 ռուբլի եւ այլն: Զը գիտենք, բուրժուաները չափ են առնում այդ գրքերից թէ ոչ, բայց գիտենք, որ ընթերցող հասարակութիւնը, նա, որ գրքեր կարդացող եւ գնահատող է, չէ էլ մօտենում այդ անմասնելի հրատարակութիւններին: Այս անգամ էլ «Հայապատմութեան» պէտք է տպվի չքեղ թղթի վրա: Սրանով կարող են արդարանալ Միջերկրան հայրենի: Բայց դա դատարկ պատճառաբանութիւն է. տուեցեք մաքուր, գեղեցիկ տպագրութիւններ միջակ թղթի վրա, բայց ընթերցողից երեք կաշի մի քերթէք: Էժան գրքը—անաւ հայեր, որ չը կայ հայերի մէջ եւ ահա նախը հայերը գրաւորութեան կողմից այնքան խեղճ ու ցատմնաց ազգ են կազմում...

ՄԻ ԽՈՇՈՐ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ ԳՈՐԾ

«ԲԱՅԿԱՅԵ» լրագրի այս տարվայ յունիսի 10-ի № 150-ի բանասիրականում տպված է հետեւեալ ժողովրդական գործի մասին:

«Եզօր Պիրօցկի, որ Տաւրիկեան նահանգում ահագին կալուածի տէր էր՝ զարմանալի տարօրինակ մարդ էր: Նա սաստիկ սիրում էր ձիադարձանութիւն, պահում էր առանձին տեսակի ունեւարական ձիեր եւ այն աստիճան սիրում էր իր զարմանած անասուններին, որ ոչ միայն ամառը, այլ նոյն—իսկ ձմեռը ինքը հովութիւն էր անում... Պիրօցկին փակ կեանք էր վարում իր կնոջ հետ, որ նոյնպէս տանտիկնութեան սիրահար էր, եւ շատ փող ունէր: Ծերունիին բանկերին չէր հաւատում, տուկոսերը թղթեր չէր գնում եւ ոսկին պահում էր անգուլներում, որոնք ամբարացած էին երկաթի կապերով՝ ըստ հին սովորութեան: Մի քանի տարի առաջ այս եզօր Պիրօցկին մեռաւ, նրանից յետոյ մեռաւ եւ նրա այրին, առանց որ եւ է կտակ թողնելու: Այն է պատրաստվում էին միջոցաւորութեան ստացումը անժամանակ հրատարակել (—որպիսի ստացումը անցնում է պետութեան—), բայց յանկարծ, անպակասելի կերպով, լոյս ընկաւ ժողովրդի մեզօր Պիրօցկի: Սկսեցին թխկ—սարքել անհագարմանալի թղթեր, դուրս եկան վկաներ, որոնք ապացուցում էին նրա ազգականութիւնը, խոշոր գումարների հոտ փչեց օդի մէջ, վրա թափվեցին փաստաբաններ, եւ վերջ ի վերջոյ մեզօր Պիրօցկին ճանաչվեց բոլոր կարողութեան ժողովրդ: Նրան յանձնեցին մեծ քանակութեամբ փող, ժողովրդից մի քանի հազար դեռանաւոր կալուածքներ, եւ երէկվայ աղբաւոր, միջոցաւորութեան իրաւունք էր զգում իրան:

«Բայց նրա բախտաւորութիւնը կարճատեւ եղաւ: Դուրս եկաւ, որ մեզօր Պիրօցկին ոչ միայն ժողովրդ չէ, այլ նաեւ ազգական չէ,

Այս գօրծամէնտները գտնվում են պ. Աղէքս.

Եւ այսպէս, չուշեցիները պէտք է խոյս տան
 արանց քուէն տալու այն տեսակ անապոյտ եւ
 անգրագէտ անձնաւորութիւններէն, որոնք ի-
 տանց սկզբունքը տեսնելով ն շահակով չհո-
 թաքարծութեան եւ ն շահակով չտեսչի մէջ,
 եւ կարող ըմբռնել այն սկզբունքը, որ ընդդ-
 լած է դպրոցի կանօնաւորութեան եւ նոյն իսկ
 այժմեան կաթողիկոսական կօնդակի մէջ:

Երեկ Թիֆլիսում տեղի ունեցավ յայտնի փառաբան Գ. Տէր-Ստեփաննանի թաղումը։ Յուզարկաւորութեանը մեծ բազմութիւն կար։ Երեկայէն Թիֆլիսի նահանգական դատարանի եւ կոլլյակսեան զինուորական դատարանի նախագահները, դատաւարական պալատի եւ նահանգական դատարանի անդամները, զենեակ Ամիրխանովի, Թիֆլիսի կոմիտայնո Բէյ-տըր, Թիֆլիսի բոլոր երդուեալ հաւատարմաւորները եւ նրանց օգնականները Դազդիւրաբ բոլո՞ւմ էին բազմաթիւ պարկերէ, Ի միջի

Պատհո. տե՛սիսի 17-ին

Յուզահանդէսի նկարազրութիւնները ընդ-
հատում եմ. նուիրելով մի քանի կօսք անձ

հրաշալի ցերեկոյթին, որ երէկ տեղի ունեցաւ Վոլֆֆի թատրոնում յօդուտ ութնուն հազար հայ որբերի, եւ որը կազմակերպւած էր «Բա- ղաբայու եւ մարդու իրաւունքների Լիգայի» (La Ligue des droits de l'homme et du citoyen) խնամակալութեան ներքոյ եւ պ. Ա. Չոպանեանի նախաձեռնութեամբ: Հոգակաւոր Լիգայի ազնիւ հրաւերով, այդ օրը բնմի վրա հա- մախմբել էր Պարիզի գեղարուեստական աշ- խարհի խոշոր աստղերին—ամենանշանաւոր արտիստներին, որոնք ամենքն էլ Ֆրանսիա- յուն յատուկ մեծանոցի մղուածից զոգլած՝ եկել էին իրանց տաղանդն ու անունը մի քանի ժամով ծառայեցնելու մարդկային զգացմունք- ներից ամենից նուիրակալին՝ զթութեանը: Այստեղ էր հռչակաւոր բանաստեղծ—վիպասան Անատոլ Ֆրանսը, Ֆրանսիական լեզուի քաղց- րութեան, ոճի նրբութեան եւ Ֆրանսիական սրտի ամենալաւ ներկայացուցիչներից մէկը, այստեղ էին յայտնի գերասաններ՝ Մուսէ-Սիլ- լի, Կօքլէն, Անտուան, այստեղ էր նաեւ տի- կին Բեթան, որի անունը Սորա-Բեթանարի հետ մէկտեղուած բնական աշխարհում: Ուրիշ բազ- մաթիւն ոչ պակաս նշանաւոր գերասաններ, երգիչներ, երգչուհիներ եւ երաժիշտներ, բոլորն էլ Ֆրանսիայի, շտապել էին արձագանք տալ Լիգայի հրաւերին:

Վարագորը բացվելուն պէս բնմի վրա յայտնվեց Անատոլ Ֆրանսի համակրելի առ- նակաւն պատկերը: Գահինը վերից վար թնդաց ծախահարութիւններով: Ապա խորին լուռութեան մէջ անուանի հեղինակը խօսել սկսեց հայերի մասին: Չայնը մի միջանկյունի մեղմութիւն ունի, որ այդ րօպէին հնչելու էր մի փոքր միտքի ձեւով եւ էլ աւելի ազդու էր դարձ- նում այն քարացնող տխրութիւնը, այն լուռ վտի ապշութիւնը, որ կարծես մէկէն իշաւ դահլիճի վրա: Ի՞նչ հզօր է Ֆրանսիական լեզուն, որքան զիւրիշ չեւտեր ունի, երբ ցաւեր պէտք է պատմել, երբ քարեր պէտք է լացայնել եւ ինչ հմայիչ է դառնում այդ լեզուն, երբ արտասանվում է այնպիսի մար- դու բերանով, որպիսի Անատոլ Ֆրանսն է, Ֆրանսիական ոճի իշխանը:

Երկու փոքրիկ տղաներ Կեղբիցի Խարիտուս եկան, զորում է զօլտօր Բարնումը, եւ ինձ ինքրեցին, որ իրանց որբանոց ընդունեմ. նը- րանք ոչ հայր ունէին եւ ոչ մայր. նրանք մը- րանոց նայում էին իմ աչքերին եւ նրանցից մէկն ինձ ասաց:

—Ընդունիր ինձ քո որբանոցում մի տարով միայն, որպէս զի ես կարողանամ գրել կար- դալ սովորել եւ մարդ դառնալ, ես երբեք մարդ չեմ դառնայ առանց գրագիտութեան: Այդ մի տարում ես կը կարողանամ սովորել նաեւ լօյիկ կարկատել եւ այսպիսով ես հնար կունենամ իմ ապրուստը հայթհայթել: Մեր որբանոցում էլ տեղ չը կայ, աւելայնում է զօլտօր Բարնումը, բայց ինչպէս մերժել այս փոքրիկ երեխաներին, որոնք այնքան յոյսեր են տալիս: Նրանց մուրալկանութեան եւ թըշ- ւառութեան գիրկը ձգելու միտքը մարդ տա- նել չէ կարողանում:

Մի ամերիկացի միսօնար մեղ գրում է Խարիտուսից. «Այս փոքրիկները հասուն մար- դիկ են: Մեզ պատահում է տեսնել մեր որբե- րի մէջ 8—9 տարեկան երեխաներ, որոնք կարծես առնական պատասխանատւութեան զգացմունքն ունենան եւ կը բերեն մի փոքրիկ տղայի օրինակ, որ շատ լաւ միճմեղի մէջ էր մեր որբանոցում եւ որը ինձ յայտնեց, թէ էլ չէ կարող մնալ որբանոցում:

—Պէտք է գնամ աշխատելու, ասաց նա. որ կերակրեմ տատին: Այս փոքրիկ մարդը ութ տարեկան էր:

Նոյն տարիքի տղաներ եւ աղջիկներ իրանց հետ որբանոց են բերում օրօրոցի երեխանե- րին—իրանց եղբայրներին եւ քոյրերին—եւ նրանց խնամում են մեծ հոգացողութեամբ:

Որբանոցների մանուկները մի քանի անգամ ինքրիկ են թող տալ իրանց կերակուր չուտել սովածներին կերակրելու համար: Պատահել է նոյն իսկ, որ ամբողջ շաբաթով օրական միայն մի անգամ են ձեռք դիպրել իրանց բրնձին ու հացին եւ մնացածը թողել են թշուառ- ներին:

Քառասուն տարի առաջ հալածված մարօ- նիստները, ինչպէս այսօր հայերը, իրանց հայացքները դարձրելով դէպի խնամակալ աղ- քերը. Լիբանանի մի ձերտնի, խողովողած մի գրողի ձեռքով եւ իր տան առաջ մահաձեռք ընկած, ուղղվեց, կանչեց իր երի- տասարդ որդուն, եւ նրա ձեռքը բռնելով ասաց:

—Իստեֆ, մի մեծ երգում պիտի տաս ինձ:

Երբ ֆրանսիացի քրիստոնեաները օդնութեան կը գան Լիբանանի իրանց եղբայրներին, դու- կը վազեա գերեզմանատուն, կը չորեա իմ գե- րեզմանի վրա եւ կը փսփսա իմ ականջին այդ աւետիքը, որպէս զի ես էլ հողի տակ Լի- բանանի ուրախութեամբ ցնցվեմ:

Այս ասելուց յետոյ նա մնաւ եւ չուտով Իստեֆ ֆարաժը կարողացաւ գնալ հողի տակ պառկած իր հօրն ասելու:

—Հայր, քնիր խաղաղութեամբ. հայր, քնիր ուրախութեամբ. քո յոյսերն իդուր չէին, Ֆրանսիայից եկան եւ մեր ժողովուրդը միա- թարված է:

Երբ համակրելի ճառարուը վերջացրեց, դահլիճի գերեզմանական լուռութիւնը փոքրիկ մի յանկարծական որոտի, հազարաւոր ձեռքե- րի ծափահարութեամբ կամարները թնդացին: Հերթը հասա Մուսէ-Սիլիին: Սա իր խա- ղի համար ընտրել էր Կօրնելի ամենայայտնի արագեղանիքից մէկը՝ Պոլիօտ, որի վերջին գործողութիւնը կատարեց: Ընտրութիւնն ան- խորհուրդ չէր. Պոլիօտը հայ իշխան է եւ ա- ռաջին քրիստոնեայ նահատակ հոռմէական կայսրութեան ժամանակ: Ապա հետզհետէ հրա- պարակ եկան միւս նշանաւոր արտիստները, որոնք բոլորն էլ որոտապին ծափահարութիւն- ների եւ համակրական ցոյցերի առարկայ դար- ձան: Ոչինչ չէր խնայված, որ ցերեկոյթը լուրջ եւ հետաքրքիր լինի մի եւ նոյն ժամանակ: Ժամը 1-ից մինչեւ 6-ը մի ընտիր հասարա- կութիւն աչք չէր հեռացնում բնմից, ուր յայտնվող արտիստները էլ չէին կարողանում ազատվել հանդիսականներից:

Վերջում հայկական մի փոքրիկ բաժին էլ կար: Պ. Սիլվանեան նուազեց դաշնամուրի վը- րա իր հեղինակութիւններէջ: Մ. Մաքս Ֆրան- սերէն կարդաց Պէշիթթայեանի մի պատետիկ պօէմա, տիկին Վեբեր մի բանաստեղծութիւն Չոպանեանից, եւ վերջապէս ինքը Չոպանեան մի բան կարդաց հայերի մասին: Այս առիթով մի քանի խօսք:

Պէտք է խոստովանել, որ պ. Չոպանեանի կարդացածը օգտակար մի փորձ էր հայերին եւրօպային ծանօթացնելու: Բայց դրա հետ միասին չենք կարող չը նկատել, որ մեր բե- րանով այդ աստիճան մեզ գովելը օտարների առաջ իր անպատեհութիւնն ունի, որի չափա- զանցութիւնը մանաւանդ ինչպէս այդ տեղի ունեցաւ երէկ, ընչառական հետեւանքների համեմուտք գտրել չէ: Աւելի վրդուկեցողիչ էր, եթէ չասնեք անմիտ, պարօնի մի այլ վար- մունքը: Բիւզանդական կայսրութեան դահլի վրա մի քանի հայեր են բազմել,—այդ լաւ գիտութեան եւ գեղարուեստի, նաեւ պետական ասպարէզում մենք մի շարք տաղանդներ ենք տեսել, ուսումնական յաղթական բանակի մէջ մի քանի փայլուն անուններ ունենք—այս բոլորն էլ լաւ. թող իմանան օտարները, որպէս զի մեր ողորմելի էգօրված, մեր անձնապատան ո- չնչութիւնը Հոսով սագերի փառքով գոհանայ: շարունակ յետ յետ նայող ազգի առաքելութիւնը դրանից հեռու գնալ չէ կարող:

Բայց ի՞նչ անուն տանք պ. Չոպանեանի այն վարմունքին, երբ նա իբրեւ յայտնի տա- ղանդներ օտարների առաջ թուում էր նաեւ ա- նուններ, որոնց մասին հայը հազիւ թէ լսած լինի: Ինչպէս հաշտեցնել, օրինակ, Լօրիս-Միլի- քով եւ Մանուէլեանը, Սիլվանեան, Համաձայն ենք, պ. Մանուէլեան մի վերին աստիճանի աշխատարար հայ ուսանող է, որ վերջերս իր կատարած մի քանի աշող բժշկական փորձե- րով մեծ յոյսեր է տալիս եւ համարվում է գիտական ասպարէզում լաւ սկսնակ, բայց մի- թէ աչքանը բուսական էր եւ իրաւունք էր տալիս պ. Չոպանեանին համարեա աշխարհա- հոյակ դարձած հայ անունների հետ յիշատա- կել նաեւ Մանուէլեանին: Յետոյ... չափն ուր է: Պ. Մանուէլեանը զարմանք կը յարուցանի, եթէ իր համեստութեան հասցրած այդ բարե- կա մական վերաւորանքի հատուցումը չը պա- հանջէ: Պ. Չոպանեան լաւ պիտի հասկանայ, որ Մանուէլեանը կարող է ասպարէզում մի Պատարօր դառնալ, ինչպէս եւ Սիլվանեան՝ մի Բեթօզէն, բայց կարող է պատահել, որ երկ- սով էլ իրանց այժմեան տեղում մնան ընդ միշտ: Տարիներ առաջ մի հայ երիտասարդ Պետերբուրգում ամենաաշող գիտական աշխա- տանքներ կատարեց եւ ինձ հաւատացրել են նոյն իսկ, որ քիմիական մի լաւ գիւտ է ա- րել: Եւ ի՞նչ, այժմ նոյն անձը մի հայ վարդա- պետ է եւ առաջինն ինքը խելագար կը համա- րի նրան, ով իր անունը կապի հայ յայտնի անունների հետ: Ի՞նչ կանէր այսօր պ. Չոպա- նեան, եթէ հենց սկզբից կովկասեան հայերը պօլսական չափով հոչակէին, թէ գիտութեան

սպասածը ծնվել է հիւսիսի մի այրում: Չափը, պարն Չոպանեան, չափը մի կորցրէք: Անա- հիտում գրեցէք, որքան կամենում էք, եւ ինչ կամենում էք, դրանից ոչ ոք ոչ կը մտի եւ ոչ կը տաքանայ. բարեբաղդաբար, հայ հա- տարակութիւնը արտասահմանեան հրատարա- կութիւններին (մանագիտականներից դուրս) carte blanche է տուել. բայց օտարների ա- ռաջ...

Ա. Անարտեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Köln. Zeitung» լրագիրը հաղորդում է լուր այն բանի մասին, որ իբր թէ Ռուսաս- տանում կազմակերպված է ակցիօնէրական եր- կաթնուղիական ընկերութիւն՝ նոր երկաթու- ղիական գիծ կառուցանելու համար, որ գնա- լու է Անդրկովկասից դէպի Փոքր-Ասիա Պարս- կաստանի հիւսիսային չրջանների վրայով: Ընկերութիւնը իբր թէ արդէն հետախուզու- թիւններ է կատարում:

—«Frankfurter Zeitung» լրագիր Լօնդոնի թղթակիցը գրում է, որ Անգլիայում, ըստ երեւոյթին, կամենում են շուտով վերջ դնել բոլորների հետ պատերազմին, թէկուզ դրա հա- մար ստիպված լինեն զիմը ապօրէն միջոց- ներին:

—«Berl. Tageblatt» լրագիր թղթակիցը հեռագրում է, որ Պրետորիայում այս րօպէին գտնվում են 5000 հիւանդ զինուորներ. ու- տեստի պաշար Պրետորիայում շատ սա- կաւ է:

—«Bar le Duc»-ում 1870—76 թվերի պատե- րազմում սպանվածների համար արձանը բա- նալու ժամանակ, զինուորական միջնաբեր ճառ արտասանեց: «Հայրենասիրութիւնը, —ասեց նա այդ ճառի մէջ,—հակառակ մի քանիսների դատարկ խօսքերի, անհատների անփականու- թիւն չէ, այլ բոլոր ֆրանսիացիների. վառագի- ղէպքում հայրենասիրութիւնը նորից կը միաց- նի բոլոր ֆրանսիացիներին, ինչպէս նախկին տարիները»:

ԻՍՈՒՆ ԼՈՒՐԵՐ

«Frankfurter Zeitung» լրագիր Պարիզի թղթակ- ցի տեղեկութիւնների համեմատ, ապրիլի 5-ից մինչև յունիսի 15-ը Պարիզ եկան՝ հիւսիսային երկաթուղիա- կան կայարանում—1,468,000 մարդ, կամ 17 1/4%—ով աւելի 1889 թվին եկածներից, արեւելեան կայարա- նում—1,371,000, կամ 10%—ով աւելի, արեւմտեան կայարանում—1,009,000, կամ 31%—ով աւելի: Տօն օ- րերին ցուցահանդէսն այցելողների թիւը հասնում է 400,000-ի եւ միջին թիւով կազմում է 230,000 մարդ օրական:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

19 յունիսի

ՀՈՍԻ: «Էլբա» զինուորական նաւի հրամա- նատարը հեռագրում է Տակուից, յունիսի 17-ից, որ Պէկինի գերմանական դեսպանից ստացված տեղեկութիւնների համեմատ, բոլոր դեսպանութիւնները, բացի անգլիականից, ֆը- րանսիականից եւ գերմանականից, եւ զիպլօ- մատիական մարմին բոլոր անդամները զբոն- վում են մէկ դեսպանութեան մէջ:

«Կալարիա» զինուորական նաւը վերադար- ձաւ Տակու:

ԲԵՐԼԻՆ: Չիֆուի գերմանական հիւպատոսը հեռագրում է, որ Պէկինի գերմանական դես- պանը սպանվեց յունիսի 5-ին:

ՇԱՆԳՀԱՅ: Հիւպատոսական մարմինը պաշ- տօնական հեռագիր ստացաւ, որը հաղորդում է, որ գերմանական դեսպանը Պէկինում, ձիով գալով Դեսպանական փողոցով, ենթարկվեց զինուորների եւ «Մեծ բուռնցքի» յարձակում- ներին: Նրան վայր գցեցին ձիուց եւ սպանե- յին, իսկ մարմինը զինուորները կտոր կտոր ա- րին: Ապա վերջը գերմանական եւ վեց ուրիշ դեսպանութիւնների չինութիւնները հրդեհվե- յին: Դեսպանութիւնների չինացի շատ ծառա- ներ սպանվեցին եւ նրանց մարմինները կրակը գցվեցին:

ՉԻՅՈՒ: Պէկինի գերմանական դեսպանը, զոհունդ-ի-եամէն դիմաւ ժամանակ, յունիսի 5-ին սպանվեց. մի զիպլօմատ վիրաւորված է եւ ազատվեց դեսպանատան մէջ: Յունիսի 10-ին միայն երեք դեսպանութիւններ անվնաս էին մնացել:

ՀՕՆԿՕՆԳ: Թէպէտ կանտոնում եւ նրա չըր- ջականերում թշնամական արամարտութիւնը դէպի օտարահպատակներն աճում է, բայց այդ

տրամադրութիւնը զսպում է վիսիւրքան, որը նշանաւոր օդնական զօրքեր է հաւաքում:

ՇԱՆԳՀԱՅ: Պրինց Տաւան բանց կայսրին եւ կայսրուհուն եւ իր ձեռքը պցեց բարձր իշ- խանութիւնը:

ԵՕԿՕՀԱՄԱ: Եւպոնիայում այն կարծիքն է տիրում, որ չինական խռովութիւններից կը ծագեն ամենամեծ քարգութիւններ, որով- հետեւ դրութիւնը Չինաստանում նպաստաւոր կը համարվի շահաւէր գործողութիւնների հա- մար, եթէ միատեսակ շահ ունեցող պետու- թիւնների միջեւ պարզ համաձայնութիւն չը կայանայ: Եւպոնիան ասում է, որ այդտեղ նա պատրաստ է զօրեղ կերպով նպաստելու բայց դռների քաղաքականութեանը Չինաստանում, բայց ձեռնպահ կը մնայ, եթէ բրիտանա- կան քաղաքականութիւնը այսուհետեւ եւս մուծ կը մնայ: Այժմ մանաւանդ յարմար գէպք է ներկայանում Հեռու Արեւելքի հարցը լու- ծելու համար, որը երեւի կը լինի հաստատուն եւ գոհացուցիչ, բայց զօրեղ գործողութիւն անհար կը լինի, եթէ Անգլիան չը վճռէ պարզ դիրք բռնել ծագած խնդիրների վերաբեր- մամբ:

ՆԻՒԵՕՐԿ: Գործիչները եղած հրդեհի ժա- մանակ զոհերի ընդհանուր թիւը 200 է: Մին- չեւ այժմ հանված են 50 դիակներ:

ՇԱՆԳՀԱՅ: Պաշտօնական աղբիւրից հաղոր- դում են, որ չինացիները տօրպէններ իջեցրին Շանցհայի եւ ցղունգուանեան զինարանի մի- ջեւ եւ զօրացրին մարտիցները Եւանցզեում՝ օտարահպատակներին դիմադրութիւն ցոյց տալու համար:

ԲԵՐԼԻՆ: Շանգուանեան երկաթուղու այս- տեղի ընկերութիւնը ստացաւ ծղկունաւորից հեռագիր, որ երկաթուղիական աշխատանքնե- րը, խռովութիւնների պատճառով, կանգ են առել: Ծղկանալծու եւ վեչէնի միջեւ տեղի ու- նին անկարգութիւններ: Ապագամբները եւ զինուորները կողպտեցին երկաթուղիական ին- ժեներներին: Նրանց աշողվեց յետ քաշվեց:

Տեանցղինի գերմանական հիւպատոսը հա- ղորդում է, որ սուրհանդակը, որին իբր թէ Պէկինից ուղարկել էր մի միսօնէր, տեղեկու- թիւն բերեց, թէ պաշտպանող զօրքերը հրա- գէնների մեծ պակասութիւն են զգում:

ԼՕՆԴՕՆ: Տրօպէից, յունիսի 16-ից հաղոր- դում են, թէ զենքաւ կ'էմէնտսի դիրաւարժ զօրաբաժինը, որը նախընթաց օրը ճանապարհ էր ընկել կնքված հրամաններով դէպի Սենե- դալ, Լինդէյ տանող ճանապարհի վրա հանդի- պեց թշնամուն, ուր տեղի ունեցաւ տաք կռիւ: Կ'էմէնտս հաղորդում է, որ ամեն ինչ բարե- յալող է: Թշնամին կանգնած է նախկին դիր- քերի վրա դէպի հիւսիս Սենեդալից եւ, ինչպէս երեւում է, դիտաւորութիւն ունի կենտրոնա- նալ Ֆիկսբուրգի մօտ:

ՇԱՆԳՀԱՅ: Լուր է պտտում, որ դաշնակից զօրքերի մեծ զօրաբաժիններ յաղթեցին կայ- սերական զօրքերին եւ «Մեծ-բուռնցքին» եւ երեւի Պէկին եկան արդէն: Պէկինի հիւպա- տոսները միաձայն առաջարկեցին իրանց կառա- վարութիւններին, որպէս միակ միջոց օտարա- հպատակներին փրկելու համար Պէկինում, յայտ- նել պետութիւնների կողմից չինական կառավա- րութեանը կամ բարձրաստիճան պաշտօնեանե- րին, որ կայսերական ընտանիքի նախաւայրերի գերեզմանները Պէկինի մօտ կոչնչացվեն, եթէ օտարահպատակները եւ մանաւանդ դեսպան- ները Պէկինում սպանվեն: Անգլիական կառա- վարութիւնը մինչեւ այժմ այդ առաջարկու- թեան դէմն է:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Տակուս անունուց յետոյ, գըր- խաւոր շտաբի ստացած տեղեկութիւնների համեմատ, բերդը պաշտպանող չինական զօր- քերը ցրվեցին զանազան կողմեր: Նրանց մի մասը գնաց դէպի այն տեղը, որ գտնվում է Պօրտ-Արտուրի եւ Մուկլէնի միջեւ եւ յար- ձակում գործեց երկաթուղու վրա, տեղ տեղ փչացնելով նրան. բայց չնորհիւ գործող հե- ռագրաթիւնի, այդ աւազակախմբի երեւալու մասին տեղեկութիւն էր ստացված եւ եռան- դուն միջոցներ էին ձեռք առնված ճանապարհը վերականգնելու եւ անկարգութիւնների առաջն առնելու համար: Թէ ինչպէս է վերաբերվում ինքն՝ անկարգութիւններին չը մասնակցող չի- նական ժողովուրդը, երեւում է նրանից, որ նա շատ տեղերում գիմեց Ռուսաստանի հովանա- ւորութեանը:

ԽՈՐԱԳԻՐ՝ ԱԼԷԿՍԱՆԴՐ ԳԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՐ-ԱՂԱՄԱՆԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԴՈՐ ՀԻՄՆՊԱՆՈՑ

Բ. ՆԱԽԱՐԱՐԻՆԵՐ

(Կուկիա, Վորոնյոյի արձանի հանդէպ)
ա մ ե ո ռ . բ ա ճ Ի Կ ի ռ ա Կ Ի օ ռ ե Ր Ի ց :
Ա Ռ Ա Ռ Օ Տ Ն Ե Ր Ը

Բ. Ա. Նախարարին—11—12 ժ. վերաբերու-
թեան, վերաբերու (սիֆիլիս) և միջատաւ. հիւանդ.
Կ. Մ. Զիլովանի—9—10 ժ. ալ. քի, ներքին և
ներաւային հ.
Զ. Ի. Բարախանով—11—12 ժ. կանանց և երե-
խայոց հիւանդ.
Կ. Ի. Գրիլիով—12 1/2—1 1/2 ժ. ալանջի, կոկորդի
և քիթի հ.
Ա. Պ. Կարապետեան—1—1 1/2 ժ. ներքին և երե-
խայոց հ.
Ե Ր Ե Կ Ո Տ Ն Ե Ր Ը
Վ. Գ. Վերկեյի—6—8 ժ. ներքին և երեխայոց հ
Բ. Ա. Նախարարին—7 1/2—8 ժ.
Վ. ճար 50 կ. ջրադրոյի ձրի. Համարորդի (կոն-
սիլիումի) և օպերայի ձրի. Համար առանձին.
Օ. Տ. Սալամիսով—առն. ծագական և բժշ-
կական մարմնամարդ. զիմել 11—1 ժ.
Հիւանդանոցի վերաբերու.
Բժշկական ՆԱԽԱՐԱՐԻՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԱԿԱՆ ԵՐԿԱՐՈՒՊ

(ժամերը Պետերբուրգի հաշուով)

տարբերութիւնը 58 րոպէ:

№ 5 գնացիք: № 3 գնացիք:

Բաղուցի դուրս է գալիս	գեր. 4 ժ. 1 ր.	գեր. 11 ժ. 29 ր.
Թիֆլիս է հասնում	առ. 8 » 53 »	եր. 5 » 34 »
Թիֆլիսից դուրս է գալիս	» 9 » 32 »	եր. 6 » 34 »
Բաթում է հասնում	եր. 9 » 1 »	առ. 7 » 14 »

№ 6 գնացիք: № 4 գնացիք:

Բաթումից դուրս է գալիս	առ. 7 ժ. 50 ր.	եր. 7 ժ. 59 ր.
Թիֆլիս է հասնում	եր. 7 » 15 »	առ. 8 » 42 »
Թիֆլիսից դուրս է գալիս	» 7 » 18 »	» 10 » 05 »
Բաթում է հասնում	գեր. 12 » 10 »	» 5 » 16 »

առաջ գնացիք

Թիֆլիսից դուրս է գալիս	» 11 ժ. 19 ր.
Բաթում է հասնում	» 9 » 41 »
Բաթումից դուրս է գալիս	» 11 » 18 »
Թիֆլիս է հասնում	» 9 » 30 »

Թիֆլիսից դուրս է գալիս	» 11 ժ. 19 ր.
Ներքին գնացիք հասնում է	» 7 » 46 ր.
Վարս հասնում է	» 12 » 56 »
Վարսից դուրս է գալիս	» 3 » 29 »
Ներքին գնացիքից դուրս է գալիս	» 8 » 35 »
Թիֆլիս հասնում է	» 7 » 15 »

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿ

Մ Ի Զ Ն Ո Ր Դ

(Посредникъ)

Դ. Ի. ԵՆԿԻՄՕՎԻՉԻ

Պուշկինեան պատաժ, Թամարեայի քարայրա-
տարայի հանդէպ:

Ծախում են տներ, հողաբաժիններ՝ գործարան-
ներ շինելու համար, քարաքանդակ և քարաքանդակ
դուրս՝ գաւառներում: Ամառանոցներ, նաւթա-
վին հողեր: Մանրամասնութիւնների համար գի-
մել գրասենեակի: № 2. 0—32

Питатель-
ный
Напитокъ

Կ Ա Վ Ո
Բաւ չափով է միայն 4 կգ.
Բոլոր անհատներին
Մարմնի և սիրտ-
րանքի փոխ
Առաջարկում է առողջապահ
և երեխաների համար:

Чистый
Какао
Блокеръ

Միակ պահեստ գերագործական ապրանքների վաճառան
Վոլկոսկան ընկերութեան մէջ:
47—50

Հոյս տեսաւ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ

ՄԵԼԻՔ-ԻՒՍՈՒՓ

պատմական պօէման

Գինն է 20 կ.

Գումարով գնողներին 20%

Դիմել՝ Тифлисъ, Центральная книжная
торговля, կամ Кавказская книжн. торговля,
կամ հեղինակին՝ Черезъ Ордубать, въ сел.
Нижне-Акулисъ.

ՀԱՆԼԱՐԱՐ

Թիֆլիսի գործանոցի գահինում,

Կիրակի, յունիսի 25-ին

ՏԱԼԻՍ ԵՄ ԽՄԲԱԿԱՆ ՀԱՄԵՐԳ

Դրա համար խնդրում են խմբի անդամ տի-
կիներին, օրհորդներին և պարոններին, նը-
մանապէս նոր ցանկացողներին, չորս րեքի
ամեն օր, երեկոյեան ժամը 3-ից—5 և 7-ից—
9-ը, կրկնողութիւնների համար, Հաւաքարի
էմանալիս գրադարան:

1—2

ԿԱՐԱ-ՄՈՒՐՁԱ

ՄԱՆԳԼԻՍՈՒՄ

ՎԱՐՁՈՎ ԵՄ ՏՐՎՈՒՄ Զուգուղ-բէկ Հասան-
Ջալալեանի ամառանոցը, 5 սենեակ, իրանց
պարագանքով և պարտէզով, Շաար-կիւրտի-
րայով: Դիմել՝ Թիֆլիս, Երեւանեան հրապա-
րակ, «Կապիվադ» հրատնոցի տակ, Ալալիբեյովի
խանութիւն:

(Հ. Ն.)

1—2

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Կիրակի, յունիսի 25-ին, երեկոյեան ժ. 9-ին,

նշանակված է

Ը Ն Դ Ն Ա Ն Ո Ւ Ր Ժ Ո Ղ Ո Վ

Կանդիդատներ ընտրելու և հերթական հար-
ցերը վճարելու համար: (Հ. Ն.)

1—2

ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՄ

ՇՈՒՇՈՒՄ Թեմական գործող վերաբնութիւն
ունեցող աշակերտներին:

2—2

Ալեքսանդր Բարոյեան

ԵՐԿՈՒ ԿԱՀԱՆՈՐԴԱԾ ՍԵՆԵԱԿ

Կուզվի հայ երիտասարդի մը համար պատա-
ւոր ընտանիքի մը մէջ, ցերեկվան կերակու-
րով: Դիմել Յովնանեան քարվասարայ: № 60:

2—3

Մանգլիտում

մի օտարուհի, որ գի-
տէ հիմնաւոր կերպով
ֆրանսերէն և գերմաներէն, ցանկանում է
դասեր տալ: Նախօրոք տեղեկանալ «Մալի»
խմբագրութեան մէջ:

2—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ

արանով յայտարարում է, որ իր Ատեանում
1900 թի յունիսի 28-ին ցերեկվայ ժամի 12-ին
նշանակված է անօրից կապարով տալու քա-
ղաքային հողի մի կտոր, որ գտնվում է Թիֆ-
լիսի 7 մասում, Հաւաքարում և որի տարա-
ծութիւնն է 23 դեկատին, քաղաքապէս գաջ
հանելու համար: Անօրիցին մասնակցել կամ-
ցողները կարող են տեսնել պայմանները վար-
չութեան 4-րորդ բաժնում բոլոր առնական
օրերը առաւօտեան ժամի 8-ից մինչև 1-ը:

3—3

Պետերբուրգի բժշկական վարչութեան ինդ-
ուսութեամբ: Մեծ արկղիկը 5 րոպէի, փոք-
րը—3 ր. և 1 ր. 50 կ.:



ՆՈՐ ՄԻՋՈՑ

մազերը բուսցնելու և ամրացնելու համար,
ոչնչացնում է թեփր: Դուրս է եկել Նաւ
բոլորովին նոր միջոց

ՁՈՒՒ ԿԱԹԸ

երեսին ընթելութիւն և սպիտակութիւն տա-
լու համար, ոչնչացնում է արեւի պատճա-
ռած սևութիւնը, մուգնը, տալիս է կա-
շուին ընթելութիւն և սպիտակութիւն: Այդ
գինըը չափաւոր են. մեծ արուակը, արկղի-
կի մէջ, 2 րոպէի, փոքրը—1 ր. 50 կ.
Ծախում են բոլոր պարֆումերական և
ղեղալիւծառական խանութներում: Դիւա-
ւոր պահանջը գտնվում է Պետերբուրգում,
Պուշկինկայա փողոց ա. № 15, բնակա-
րան № 12. պահանջի բաժանմունքները
գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դե-
ղատան ապրանքների վաճառան ընկերու-
թեան խանութում: Երեւանեան հրապարակ
և նրա բաժանմունքում, Միջայէրեան փո-
ղոց և Բազում. նաև Միջայէրեան կամուր-
ջի վրա, Պապովի և Արիստակովի դեղատ-
ներում: Օտարաքաղաքացիների պատուէր-
ները կատարվում են անմիջապէս՝ պատուով:
83—100

Թիֆլիսի Կենտրոնական Գրախաւաւանցում

վաճառում են հետեւեալ գրքերը՝

Պոռչեանց Պ., Կուսածաղիկ, վէպ, բ. տպագր. Թիֆլիս, գինն է 1 ր. 30 կ.:
» Բղդէ, վէպ, Թիֆլիս, գ. 1 ր. 20 կ.:
» Յուշիկներ, Թիֆլիս, գ. 1 ր.:
» Յեղեր, վէպ, Թիֆլիս, գ. 1 ր.:
» Նա, պատկեր, Թիֆլիս, գ. 20 կ.:
» Միջէլ աղենց Արդիւր, գրոց իրական կեանքից, Թիֆլիս, գ. 20 կ.:
» Աջգիւղի, պատկեր, Թիֆլիս, գ. 25 կ.:
Պետաւոցցի Հ., Լինհարդ և Գերարուդ, վէպ ժողովրդի համար, Թիֆլիս, գ. 1 ր. 50 կ.:
Տուրգենեւի Ի. Յաղթական սիրոյ երգը, գ. 30 կ.:
Դիմել՝ Въ Тифлисъ, Центральной Книжной Торговлѣ. (3) 2—2


ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿԶԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Վարչութիւնը պատու ունի յայտնել հետեւեալով Ա. Պողոսեան նուիրել է ընկերութեան ան-
ձեռնմխելի 5000 րուբլի գումար, որի տոկոսով (մօտ 500 ր) երկու տարին մի անգամ պէտք
է տրվի մրցանակ հայոց նոր (17-երորդ դարից սկսած) գրականութեան և պատմու-
թեան վերաբերեալ լաւագոյն աշխատութիւնների համար: Մրցանակին մասնակցել ցանկա-
ցողները պէտք է ներկայացնեն իրանց աշխատութիւնները մինչև 1901 թականի յունիսի
1-ը: Աշխատութիւնները ներկայացվում են առանց հեղինակների անունների. այս անունները
ներկայացվում են առանձին ծրարներով, որոնց վրա գրվում է նոյն նշանաւանը, ինչ որ աշ-
խատութեան վրա: Մրցանակի արժանացած ձեռագրի բառարակութիւնը կատարվում է ըն-
կերութեան հաշուով: Մրցանակաբաշխութեան իրաւունքը պատկանում է ընկերութեան խմբա-
գրական մասնաժողովին, որը իր կողմից ձեռագրի ընտրութիւնը կարող է յանձնել և կողմնա-
կի ձեռնհաս անձանց: Մրաբները և աշխատութիւնները ուղարկվելու են ընկերութեան գրա-
սենեակի հասցէով և նրանց վրա պէտք է նշանակվում լինի Ա. Պողոսեանի մրցանակի համար:
Ընկերութեան գրասենեակի հասցէն. Լորիս-Մելիկովսկայա ул. Тифлисское Общество
Издания Армянских Книг. 2—3

ТРЕБУЙТЕ ВЕЗДѢ
ШОКОЛАДЪ
СІУ
ФАБР. С. СІУ и К. МОСКВА.

М. 9,730

(2)



Լ. ԽԱՆ-ԱՂԱՆԵՅԻ

աւատ էլէվատոր գիւղեր-ցերեկ ինքն իրմէն ջուր է բարձրացնում ցածր տեղերից վերեւ:
Դիմել՝ Л. Ханъ-Агову, Тифлисъ, Великокняжеская ул., 37.

Լ. ԽԱՆ-ԱՂԱՆԵՅԻ

Գրադատնական մեքենաներ 250 նկարով. վաճառականների մօտ 50 կօպէկ: 22—30

Фабрика
карандашей
A. W. FABER
Основана
1761 г.

Всѣ произведенія
этой издавна из-
вѣстной фабрики
снабжены утверж-
деннымъ Правит.
фабричнымъ
КЛЕЙМОМЪ А. W. FABER или А. W. F., или А. В. ФАБЕРЪ


Произведенія
А. В. ФАБЕРЪ
можно получать въ
каждомъ лучшемъ
магазинѣ, письм.
и рисов. принад-
лежностей.

на что во избѣжаніе ошибокъ ПРОСИМЪ ОБРАЩАТЬ ВНИМАНІЕ

А. В. ФАБЕРЪ

17—30

131559



ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑՁՈՒԹԻՒՆ

Ռուսաց և արտասահմանեան ֆի-
մաների:

ԲԻՐՈՆ ՅԱՆՁՆ ԵՄ ԱՌՆՈՒՄ

Կառուցանել
Ամեն տեսակ շինութիւններ, գոր-
ծարաններ և գործատներ
ԳԱԶԱ-ՇՈՒԳԻՒ-ՋՐԱՆՑՔՆԵՐ

Ամեն տեսակ էլէկտրոնիկական
կառուցումներ և սարքեր, այսինքն
հեռագիրների, տէլեֆոնների, բու-
սաւորութեան, արամվաների և ոյ-
թի հաղորդիչ հեռաւորութեան վրա:

ՇԻՆԵՐԸՆԿԱՆ-ՏԵԽՆԻԿԱՆ ԲԻՐՈ

Ինժեներ Ն. Բ. Պապուկի

Тифлисъ, Михайловская ул. № 116.

Հասցին հեռագիրների համար. Тифлисъ—

Пассежу.

Տէլեֆոն № 642.



ԿԱՆԱԼԻԶԱՑԻԱ, ՎԵՆՏԻԼԱՑԻԱ և ՏԱԳԱՑՈՒՄԸ

ԴՆԵԼ, ԺՈՂՈՎԵԼ և ՍԱՐՔԵԼ

ամեն տեսակ

տիրիւններ, խողովակներ, մեքենա-
ներ և ջրաներ:

ԿԱՌՈՒՑԱՆԵԼ

ԵՐԿԱԹ ԵՄ ԿԱՄԱՐՁՆԵԼ
և տնակներ:

ՏԵՄԵՆՏԻ ՎԱՃԱՌՈՒՄ

(Կ. Հ. Ն.)